ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«16» 09 2025թ.
No 011075

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՒՐԻԿ ԱՀՄԵԴԻ ԹԱՄՈՅԱՆԻՆ
(Հասցե՝ Կոտայք, Հրազդան, Վանատուր, 113,
պատճենը՝ Կոտայք, Հրազդան, Զորավար Անդրանիկի պող., 139)

Հարգելի՛ պարոն Թամոյան,

Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի օգոստոսի 27-ին ստացել է հաղորդում (այսուհետ նաև՝ **Հաղորդում**) մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից «Sannuuy Girl», «Sumyu Girl», «Seeny Girl», «Sunlly Girl», «Sunny Gold», «Suny Green», «Sunnuy Girl», «Sunigll», «Sunuuy Girl» և նմանօրինակ գրառումներ պարունակող կանացի միջադիրների ներմուծման և իրացման վերաբերյալ, որի առնչությամբ Հանձնաժողովը քննարկում է վարույթ հարուցելու առիթները:

Հանձնաժողովի կողմից «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությունն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված և ղեկավարելով Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել Նուրիկ Ահմեդի Թամոյան անհատ ձեռնարկատիրոջ վաճառասրահներում ցուցադրվող «Sannuuy Girl», «Sumyu Girl», «Seeny Girl», «Sunlly Girl», «Sunny Gold», «Suny Green», «Sunnuy Girl», «Sunigll», «Sunuuy Girl» և նմանօրինակ գրառումներ պարունակող կանացի միջադիրների լուսանկարները, որոնցում հստակ տեսանելի կլինեն այդ արտադրանքների ապրանքային նշանները, արտադրող և ներմուծող ընկերությունների տվյալները:

էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Հասմիկ Նորավյան
Մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (216)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 22 հոկտեմբերի 2025 թվական: